

**ՏՆՕՐԻՆՉԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՈՒՆՔԻ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ
(ՏՆՕՐԻՆՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ,
ՏՆՕՐԻՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ)**

Քաղաքացիական դատավարության իրավունքում տնօրինչականության սկզբունքն ավանդաբար առանձնացվել է իր նշանակությամբ և ներկայումս էլ դիտարկվում է որպես իրավունքի տվյալ ճյուղի առանձնահատուկ և կենտրոնական սկզբունքներից մեկը, որի հիման վրա իրականացվում է դատավարական հարաբերությունների իրավական կարգավորումը, կոնկրետ քաղաքացիական գործի շրջանակներում կազմակերպվում և զարգանում է վարույթը:

Տնօրինչականությունն այն հիմնական ու ելակետային գաղափարներից է, որոնք դատավարագետների կողմից վաղուց անշեղորեն ներառվում են քաղաքացիական դատավարության իրավունքի սկզբունքների համակարգում՝ չենթարկվելով ո՛չ ժամանակի և ո՛չ էլ իրավական երևույթների հետազոտման ոլորտում գիտական տեսակետների փոփոխության ազդեցությանը: Սակայն եթե տնօրինչականության սկզբունքի տեղը քաղաքացիական դատավարության սկզբունքների համակարգում գիտական բանավեճերի տեղիք չի տալիս, ապա տնօրինչականության էությունն ու բովանդակությունը առ այսօր հանդիսանում են դատավարագետների հետազոտության առարկա:

Քանի որ տնօրինչականության էությունը կայանում է նրանում, որ դատավարության զարգացմանն ու դադարմանն ուղղված դատարանի գործողությունները մեծապես պայմանավորված են շահագրգիռ անձանց նախաձեռնությամբ և կամահայտնությամբ, քննարկվող սկզբունքի բովանդակությունը պետք է ներառի նման պայմանավորվածության բոլոր այն դեպքերը, երբ դատարան-դատավիճող կողմ իրավական կապում կողմը հանդես է գալիս որպես «ուղղոր-

¹ ԵՊՃ քաղաքացիական դատավարության ամբիոնի հայցորդ, գիտ. դեկավար՝ ի. գ. թ., դոցենտ Ս. Գ. Մեղրյան:

դող», իսկ դատարանը՝ «ուղղորդվող»²: Տվյալ դեպքում խոսքը գործին մասնակցող անձանց այնպիսի դատավարական իրավունքների մասին է, որոնց իրականացման միջոցով կոնկրետ քաղաքացիական գործով ուղղորդվում է դատական գործունեությունը³:

Մենք համամիտ ենք Ս. Ա. Սապոժնիկովի հետ այն հարցում, որ քանի որ տնօրինչականությունն արտահայտում է դատական պաշտպանության կախվածությունը գործով շահագրգիռ անձանց կամահայտնությունից: Տվյալ սկզբունքի բովանդակությունը կարող են բնութագրել բացառապես այնպիսի իրավական կապերը, որոնց շրջանակներում գործին մասնակցող անձը հանդես է գալիս որպես իրավագոր, իսկ դատարանը՝ պարտավոր անձ: Ընդ որում, հիմնական գործառնության ծանրությունն ընկնում է կողմերի դատավարական իրավունքների վրա, քանի որ դատարանի պարտականությունները, պարզապես նախատեսված լինելով օրենքով, «միանում» և դատարանի համար դառնում են վարքագծի պարտադիր կանոն բացառապես դատավարության մասնակիցների կամքով⁴:

Այս առումով տնօրինչականության սկզբունքի բովանդակության վերլուծությունը պահանջում է վերհանել տվյալ սկզբունքի գործողությունը միջնորդավորող տնօրինչական իրավունքների շրջանակը: Դա նաև թույլ կտա սահմանել տնօրինչականության սկզբունքի հասկացությունը, որը, պետք է նշում պարունակի այն մասին, թե քննարկվող սկզբունքն ինչ բնույթի իրավունքներ իրականացնելու հնարավորություն է ներառում և այդ իրավունքների իրականացմամբ ինչ բարիքներ են տնօրինվում:

Գրականության մեջ բանավեճի առարկա են հանդիսանում հետևյալ հարցադրումները.

1. արդյոք դատավարական տնօրինչականությունը ենթադրում է վարույթի ընթացքում սուբյեկտիվ նյութական իրավունքներ տնօրինելու հնարավորություն.

2. գործին մասնակցող անձանց ո՞ր դատավարական իրավունքներն են հարկավոր դիտարկել տնօրինչականության սկզբունքի գոր-

² St' u Сапожников С. А., Принцип диспозитивности в гражданском процессе. Дисс... к.ю.н. М., 2006, էջ 97:

³ St' u նույն տեղում:

⁴ St' u Сапожников С. А., Принцип диспозитивности в гражданском процессе. Дисс... к.ю.н. М., 2006, էջ 97:

ծողության ոլորտում.

3. դատավարական ո՞ր իրավունքներն են գտնվում տնօրինչականության և որո՞նք մրցակցության սկզբունքի գործողության ոլորտում.

4. ի՞նչ է տնօրինվում տնօրինչական իրավունքների իրականացման արդյունքում.

5. պետք է արդյոք տնօրինչականության սկզբունքի հասկացության մեջ ներառել դատավարական պարտականություններն իր հայեցողությամբ կատարելու հնարավորությունը:

Գիտնականներից շատերը դրական են արտահայտվում վարույթի ընթացքում ինչպես դատավարական, այնպես էլ նյութական իրավունքների տնօրինման հնարավորության մասին (Ե. Վ. Վասկովսկի, Վ. Մ. Սեմյոնով, Ե. Ֆ. Տարանենկո, Ի. Վ. Ռեշետնիկովա, Ռ. Գ. Պետրոսյան, Վ. Վ. Հովհաննիսյան և այլոք): Վարույթում ինչպես դատավարական, այնպես էլ նյութական իրավունքները տնօրինելու հնարավորությունը ճանաչելու մոտեցումը հատուկ է «տնօրինման տեսության» կողմնակիցներին, որոնք դատավարական տնօրինչականությունը դիտարկում են սուկ որպես նյութաիրավական տնօրինչականության դրսևորում և դրա ուղղակի հետևանք:

Միևնույն ժամանակ առանձին հեղինակներ մերժում են վարույթի ընթացքում տնօրինչական ակտերի կատարման միջոցով նյութական իրավունքներ տնօրինելու հնարավորությունը և ընդունում են միայն դատավարական իրավունքների տնօրինման ազատությունը⁵: Այսպես, Ռ. Ե. Ղուկասյանը կարծում էր, որ նյութական իրավունքների տնօրինումը քաղաքացիական դատավարության տնօրինչականության սկզբունքի դրսևորում չէ: Ըստ հեղինակի, տնօրինչականության դատավարական սկզբունքի բովանդակությունն են կազմում վարույթի շարժի վրա ներգործելու նպատակով իրականացվող դատավարական իրավունքները:⁶

Քննարկվող հարցով մեր դիրքորոշումը ձևակերպելու համար

⁵ Տե՛ս **Гукасян Р. Е.**, Проблема интереса в советском гражданском процессуальном праве. Саратов, 1970, էջ 74, **Сахнова Т. В.**, Курс гражданского процесса: теоретические начала и основные институты. М.: «Волтерс Клувер», 2008, էջ 138-139, **Русинова Е. Р.**, Распорядительные права сторон в гражданском процессе. Дисс... к.ю.н. Екатеринбург, 2003, 55-56, **Осокина Г. Л.**, Гражданский процесс: общая часть. 3-е изд. М.: «Норма», 2013, էջ 152:

⁶ Տե՛ս **Гукасян Р. Е.**, նշված աշխատ., էջ 68:

նպատակահարմար ենք համարում որպես ելակետ ընդունել դատավարագիտության մեջ հանրաճանաչ այն գաղափարը, որ քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերով կարգավորվող բոլոր հարաբերությունները դատավարական են, այդ իրավահարաբերությունները ծագում են մի կողմից դատարանի և մյուս կողմից՝ դատավարության մասնակիցների միջև, դատավարության մասնակիցների միջև վարույթի ընթացքում, շրջանցելով դատարանին, դատավարական իրավահարաբերություններ չեն ծագում, և, որ ամենակարևորն է, դատավարական իրավահարաբերությունների բովանդակությունն են կազմում դրանց սուբյեկտների դատավարական սուբյեկտիվ իրավունքները և պարտականությունները⁷: Այստեղից հետևում է, որ քաղաքացիական դատավարության մեջ բոլոր իրավունքները դատավարական են, ուստի վարույթի ընթացքում իրականացվող տնօրինչական իրավունքները կարող են ունենալ բացառապես դատավարական բնույթ:

Ամեննիսի չբացառելով դատավարության ընթացքում վիճելի նյութական իրավունքների տնօրինման հնարավորությունը, այդուհանդերձ գտնում ենք, որ դատավարության տնօրինչականության տեսանկյունից գերակայող նշանակություն ունի այն դատավարական իրավունքների իրականացումը, որոնց իրականացումը հանգեցնում է դատական պաշտպանության իրավունքի և պաշտպանության հայցային միջոցների տնօրինման: Քաղաքացիական դատավարության իրավունքի տնօրինչականության սկզբունքը վերաբերում է բացառապես իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանության իրավունքի և դրանց պաշտպանության միջոցների տնօրինման հնարավորությանը: Ինչ վերաբերում է նյութական իրավունքների իրականացմանը (տնօրինմանը), ապա այն ունի ինքնուրույն բնույթ, հանդիսանալով նյութական իրավունքի տնօրինչականության սկզբունքի դրսևորում, որն է կերպ չի կարող անդրադառնալ դատավարության վրա, եթե չի ստանում համապատասխան դատավարական ձև:

Ինչպես իրավացիորեն նշում է Ռ. Ե. Ռուսինովան, տնօրինչականությունը քաղաքացիական դատավարության ինքնուրույն

⁷ См. у **Шакарян М. С.**, Учение о сторонах в советском гражданском процессе. М., 1983, էջ 14, Гражданское процессуальное право России. Под ред. **М. С. Шакарян.** М., 1996, էջ 139, Гражданский процесс. Под ред. **В. В. Яркова.** М.: «Инфотропик», 2012, էջ 50-52:

սկզբունք է, որը չի հանդիսանում նյութական սուբյեկտիվ իրավունքների ինքնավարության հետևանք, այն գոյություն ունի անկախ նրանից, թե ինչպիսի ճյուղային պատկանելության իրավունք կամ օրինական շահ է հանդիսանում դատական պաշտպանության առարկան. քաղաքացիադատավարական տնօրինչականության աղբյուրը սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանության իրավունքն է, որը, որպես սահմանադրական իրավունք, հատուկ է բոլոր իրավունքի ճյուղերին, ընդ որում՝ անկախ իրավական կարգավորման իմպերատիվ և դիսպոզիտիվ կարգավորումների սովյալ ճյուղին հատուկ հարաբերակցությունից⁸:

Համամիտ ենք Տ. Վ. Մախնովայի հետ այն հարցում, որ հարուցված գործի պայմաններում կողմերը և այլ շահագրգիռ անձինք, որպես դատավարական հարաբերությունների մասնակիցներ, նպատակ ունենալով ազդել պաշտպանության առարկայի և օբյեկտի վրա, պետք է կատարեն որոշակի դատավարական գործողություն, մտնեն որոշակի դատավարական իրավահարաբերության մեջ, հակառակ պարագայում վարույթի ընթացքում նյութաիրավական հետևանքներ չեն առաջանա: Ճիշտ է նկատում հեղինակը, որ հայցվորը կարող է պատասխանողին ներել պարտքը, սակայն վարույթի համար դա որևէ հետևանք առաջացնել չի կարող, եթե նա չկատարի իրավունքի նման տնօրինումը միջնորդավորող դատավարական գործողություն, մասնավորապես՝ չհրաժարվի հայցից⁹:

Լիովին կիսում ենք այն դիրքորոշումը, որ նյութական իրավունքների տնօրինումը տեղի է ունենում նյութաիրավական հարաբերություններում, և եթե այդ իրավահարաբերություններն իրենց վիճելիության պատճառով դառնում են դատավարության առարկա, դրանցից բխող իրավունքների և պարտականությունների տնօրինումը հնարավոր է բացառապես դատավարական օրենսդրությամբ նախատեսված դատավարական իրավունքների իրականացման միջոցով¹⁰:

Քաղաքացիական և այլ նյութաիրավական իրավունքների ինքնավարությունը նյութական կարգավորիչ իրավահարաբերություններ-

⁸ Տե՛ս **Русинова Е. Р.**, Распорядительные права сторон в гражданском процессе. Дисс... к.ю.н. Екатеринбург, 2003, էջ 46:

⁹ Տե՛ս **Сахнюва Т. В.**, Курс гражданского процесса: теоретические начала и основные институты. М.: «Волтерс Клувер», 2008, էջ 138:

¹⁰ Տե՛ս նույն տեղում:

րի տնօրինչականության հիմքն է: Ինչ վերաբերում է քաղաքացիական դատավարությանը, այստեղ տնօրինչականության հիմքը դատական կարգով իր իրավունքները և օրինական շահերը պաշտպանելու և պաշտպանության առավել արդյունավետ եղանակներ ընտրելու հարցում անձին վերապահված ազատությունն է:

Տեսական և գործնական կարևոր նշանակություն ունի այն, թե գործին մասնակցող անձանց ո՞ր դատավարական իրավունքներն է հարկավոր դիտարկել տնօրինչական, դատավարական ո՞ր իրավունքներն են գտնվում տնօրինչականության և որո՞նք մրցակցության սկզբունքի գործողության ոլորտում և, ի վերջո, ինչ է տնօրինվում տնօրինչական իրավունքների իրականացման արդյունքում:

Նշված հարցերի շուրջ ևս դատավարագիտության մեջ կան տարակարծություններ:

Մի խումբ հեղինակներ, որոնք տնօրինչականության սկզբունքի ակունքները կապում են նյութական իրավունքի հետ, կարծում են, որ տնօրինչականության սկզբունքը տարածվում է գործին մասնակցող անձանց ոչ բոլոր իրավունքների վրա, այլ բնորոշ է միայն այն իրավունքներին, որոնց հիմքում ընկած է կապը նյութաիրավական հարաբերությունների հետ: Ըստ նշված հեղինակների, եթե դատավարական իրավունքի տնօրինումը կարող է ազդել նյութական իրավունքների վրա, ապա այն պետք է դիտարկվի տնօրինչականության սկզբունքի շրջանակներում¹¹:

Տվյալ մոտեցումը դատավարական հարաբերությունների իրավական կարգավորման ներկայիս պայմաններում որոշակի առարկությունների տեղիք է տալիս: Գործող դատավարական օրենսդրությունը նախատեսում է մի շարք դատավարական իրավունքներ, որոնց իրականացումից հրաժարվելը (չիրականացնելը) թեկուզև անուղղակիորեն (վճռի միջոցով) կարող է ազդել գործին մասնակցող անձի նյութական իրավունքների և պարտականությունների վրա: Այսպես, եթե գործին մասնակցող անձը չի մասնակցում նախնական դատական նիստին կամ գործի դատաքննությանը, չի ներկայացնում առարկություններ մյուս կողմի ներկայացրած փաստարկների և վկայակոչած հանգամանքների դեմ, կամ սահմանափակվում է պարզ հերք-

¹¹ Տե՛ս, օրինակ, **Авдеенко Н. И.**, Механизм и пределы регулирующего воздействия гражданского процессуального права. Л.: ЛГУ, 1969, էջ 54-55:

մամբ, չի ներկայացնում իր տիրապետության ներքո առկա ապացույցները, անհիմն հրաժարվում է ցուցմունք տալուց կամ որոշակի հարցերի պատասխանելուց, չի միջնորդում դատարանին իր առարկությունները հիմնավորելու համար վկա կանչել, ապացույցներ պահանջել և այլն, դրանով իսկ չիրականացնելով իր դատավարական իրավունքները (հաստատման և ապացուցման բեռը)¹², դատարանը, հիմք ընդունելով ՔՂՕ 48-րդ հոդվածի 6-րդ մասը, գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստը վիճելի մնալու բացասական հետևանքները կարող է դնել այդ սուբյեկտի վրա, ինչը գործնականում դրսևորվում է նրա ներկայացրած հայցն անհիմն համարելու կամ նրա դեմ ներկայացված հայցի հիմքում ընկած հանգամանքը հաստատված (չհերքված) համարելու մեջ: Նման իրավիճակում թվարկված դատավարական իրավունքների տնօրինումը (չիրականացումը) անխուսափելիորեն ազդում է նաև վիճելի հարաբերությունների վրա:

Մեկ այլ խումբ հեղինակների կարծիքով տնօրինչականության սկզբունքի բովանդակությունը ներառում է այն դատավարական իրավունքները, որոնք թույլ են տալիս որոշել դատական պաշտպանության առարկան և ազդել դատավարության ուղղվածության ու ընթացքի (փուլից փուլ անցնելու և դադարելու) վրա¹³:

Դատավարական տնօրինչականության էության վերաբերյալ գրականության մեջ արտահայտված տեսակետների ամփոփման հիման վրա կարծում ենք, որ առավել ընդունելի է վերջին տեսակետը: Չնայած վեճի առարկա նյութական իրավունքների տնօրինումը կարող է միջնորդավորված եղանակով ազդել դատական պաշտպանության իրավունքի իրականացման, վարույթի ուղղվածության, բովանդակության և զարգացման վրա, այդուհանդերձ, նկատի ունենալով նման ազդեցության միջնորդավորված բնույթը (այդ մասին խոսել ենք վերը), տնօրինչականության սկզբունքի գործողության ոլորտում

¹² Դատավարագիտության մեջ հիմնավորված կարծիք է հայտնվել, որ ապացուցման բեռը (պարտականությունը) կարող է իրականացվել բացառապես դատավարական իրավունքների իրականացման միջոցով: Տե՛ս **Մեդրյան Ս. Գ.**, Արագացված դատաքննության հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, - Եր, 2011, էջ 8:

¹³ Տե՛ս, օրինակ, **Боньер А. Т.**, Принцип диспозитивности советского гражданского процессуального права. Учебное пособие. М.: 1987, էջ 44, **Моисеев С. В.**, Принцип диспозитивности арбитражного процесса. Дисс. к.ю.н., М., 2001, էջ 31:

գտնվող դատավարական իրավունքների շրջանակներում պետք չէ դիտարկել ցանկացած դատավարական իրավունք, որի տնօրինումը կարող է որևէ եղանակով ազդել նյութական իրավահարաբերությունների վրա:

Կարծում ենք, որ քննարկվող հարցը պետք է դիտարկել իրավունքի սկզբունքների կարգավորման առարկայի տեսանկյունից:

Քաղաքացիական իրավունքի տնօրինչականության և քաղաքացիական դատավարության համանուն սկզբունքների միջև գոյություն ունեցող թեկուզև անուղղակի կապը և փոխապայմանավորվածությունն անհերքելի են: Դատավարագետները տնօրինչականության սկզբունքի ակունքներն իրավացիորեն կապում են նյութական քաղաքացիական իրավահարաբերությունների դիսպոզիտիվ բնույթի հետ¹⁴: Համընդհանուր ճանաչում ունի այն, որ տնօրինչականությունը դատավարությունում պայմանավորված է մասնավոր իրավունքում իրավունքները, ներառյալ՝ դրանց պաշտպանությունն ազատորեն, իր հայեցողությամբ և ի շահ իրեն իրականացնելու, այդ թվում տնօրինելու անձի ազատությամբ: Մինչ դատավարությունը և դատավարությունից դուրս իրավատիրոջը վերապահված լիարժեք ազատությունն իր արտացոլումը որոշակիորեն պետք է գտնի նաև դատավարության մեջ¹⁵:

Չնայած գոյություն ունեցող փոխադարձ կապին և փոխապայմանավորվածությանը տնօրինչականությունը քաղաքացիական իրավունքում ունի իր կարգավորման առարկան, որը չի համընկնում համանուն դատավարական սկզբունքի կարգավորման առարկային: Եթե առաջին դեպքում սկզբունքի կարգավորման առարկան նյութական իրավահարաբերությունն է, ապա դատավարական սկզբունքի կարգավորման առարկան դատավարական իրավահարաբերությունն է, որը ծագում է կոնկրետ հայցի (դիմումի) քննության և լուծման կապակցությամբ՝ դատարանի և գործին մասնակցող անձանց միջև: Ուստի դատավարական տնօրինչականության շրջանակներում ճիշտ է դիտարկել բացառապես այն դատավարական իրավունքները, որոնց իրականացումը կարող է ազդել ոչ թե նյութական, այլ դատա-

¹⁴ См. у **Боннер А. Т.**, Принцип диспозитивности советского гражданского процессуального права. Учебное пособие. М.: 1987, էջ 35:

¹⁵ См. у **Васьковский Е. В.**, Курс гражданского процесса. М.: Башмаковы, 1913, Т. 1, էջ 367-368:

վարական իրավահարաբերությունների (պրոցեսի) ընթացքի, վարույթի ուղղվածության և դադարման վրա: Նյութական իրավահարաբերությունների վրա որոշ դատավարական իրավունքների իրականացման հնարավոր ազդեցությունը, ինչպես նաև կապը նյութական իրավունքի հետ տվյալ դեպքում ունի երկրորդական նշանակություն:

Եթե պայմանականորեն ընդունենք այն տեսակետը, որ տնօրինչականության սկզբունքը տարածվում է բոլոր այն դատավարական իրավունքների վրա, որոնց հիմքում ընկած է կապը նյութաիրավական հարաբերությունների հետ, որոնց իրականացումը (այդ թվում՝ տնօրինումը) այս կամ այն կերպ կարող է անդրադառնալ նյութական իրավահարաբերությունների վրա, ստիպված կլինենք տնօրինչականության սկզբունքի գործողությունը տարածել նաև գործին մասնակցող անձանց այն իրավունքների վրա, որոնք իրականացնելու (այդ թվում՝ տնօրինելու) հնարավորությունը կազմում է քաղաքացիական դատավարության մեկ այլ սկզբունքի՝ մրցակցության բովանդակությունը (օրինակ՝ ներկայացնելու ապացույցներ և մասնակցելու դրանց հետազոտմանը, հարցեր տալու, միջնորդություններ անելու, դատարանին բացատրություններ տալու, գործի քննության ընթացքում ծագող բոլոր հարցերի վերաբերյալ ներկայացնելու իրենց փաստարկները, առարկելու գործին մասնակցող այլ անձանց միջնորդությունների, փաստարկների դեմ և այլն):

Տնօրինչականության սկզբունքի բովանդակությունը, տնօրինչական իրավունքների և տնօրինչական գործողությունների շրջանակը որոշելու հիմնական դժվարությունը, կապված է այն իրողության հետ, որ դատավարագիտության մեջ տնօրինչականության սկզբունքի հասկացության մեջ առավել հաճախ ներառվում է տնօրինչականության միայն այնպիսի բնութագրիչ հատկանիշ, ինչպիսին իրավունքներն իրականացնելու ազատությունն է: Այդ կապակցությամբ հարկ է նկատել, որ նման մոտեցումը բերում է «դատավարության սկզբունք» և «իրավական կարգավորման մեթոդ» հասկացությունների նույնացմանը, որի պայմաններում ցանկացած սուբյեկտիվ իրավունք կարող է դիտարկվել տնօրինչական:

Ակնհայտորեն պահանջվում է վեր հանել տնօրինչական դատավարական իրավունքների ևս մեկ բնութագրիչ հատկանիշ, որն իրավական կարգավորման թույլատվական տիպի պայմաններում, հնարավորություն կտա դրանք սահմանազատելու մյուս դատավարական

իրավունքներից:

Տնօրինչականության սկզբունքի բովանդակությունը որոշելու տեսանկյունից չափազանց կարևոր ենք համարում Մ. Ա. Գուրվիչի «դինամիկ» տեսության հիմքում դրված այն գաղափարը, որ կողմերի դատավարական իրավունքները հարկավոր է դասակարգել ըստ վարույթի շարժի վրա դրանց ազդեցության, և դատավարական տնօրինչականության առումով պետք է կարևորել կողմերի «պոտենտատիվ» իրավունքները, որոնք ամբողջ քաղաքացիական դատավարության ընթացքի վրա ունեն «միջանցիկ» կոնստիտուտիվ (կանխորոշիչ) ներգործություն¹⁶:

Ըստ էության կողմերի «պոտենտատիվ» իրավունքների իրականացման դեպքում է, որ դատարան-դատավիճող կողմ իրավական կապում այդ իրավունքն իրականացնող կողմը հանդես է գալիս որպես «ուղղորդող», իսկ դատարանը՝ «ուղղորդվող»:

Ինչպես նշել ենք վերը տնօրինչականության «դինամիկ տեսությունը» ներկայացնելիս, կողմերի «պոտենտատիվ» իրավունքների հիմնական հատկանիշներ են դրանց իրավաստեղծ բնույթը և շարժիչ ուժը, որոնցով քննարկվող տնօրինչական իրավունքները տարբերվում են՝ 1) այն իրավունքներից, որոնց իրականացմամբ կողմը դատարանին «հիշեցնում» է օրենքով նախատեսված, դատարանի կողմից *ex officio* կատարման ենթակա գործողություններ կատարելու անհրաժեշտության մասին (օրինակ՝ գործի քննությունը հետաձգելու կամ վարույթը կասեցնելու, վկայակոչված իրեղեն և գրավոր ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, շուտ փչացող իրեղեն ապացույցները գործը դատաքննության նախապատրաստելու փուլում գննելու, օտարերկրյա իրավական նորմերի պարզաբանման նպատակով իրավասու սուբյեկտներին դիմելու և այլ նման միջնորդություններ ներկայացնելու իրավունքները), 2) այն իրավունքներից, որոնց իրականացումը վարույթի համար կոնստրուկտիվ նշանակություն չունի, չի ազդում վարույթի շարժի, դրա փոփոխման կամ դադարման վրա (օրինակ՝ ապացույցներ ներկայացնելու, դրանց հետազոտմանը մասնակցելու, առարկություններ և փաստարկներ ներկայացնելու, ապացույցներ ապահովելու, հայցի ապահովման միջոցներ

¹⁶ См. у Гурвич М. А., Структура и движение гражданско-процессуального правоотношения // Вопросы науки советского гражданско-процессуального права. Труды ВЮЗИ. Т. 38. М., 1975, էջ 9:

կիրառելու, փորձաքննությունն նշանակելու, կողմին պատկանող գրավոր ապացույցների բնօրինակները և իրեղեն ապացույցները վերադարձնելու և այլ նման միջնորդություններ ներկայացնելու իրավունքները):

Հիմք ընդունելով Մ. Ա. Գուրվիչի գաղափարները և հաշվի առնելով մրցակցության սկզբունքի բովանդակության վերաբերյալ դատավարական գիտության մեջ առկա մոտեցումները՝ Մ. Ա. Վիկուտն առաջարկում է տնօրինչականության և մրցակցության սկզբունքների հստակ սահմանազատման համար գործին մասնակցող անձանց դատավարական իրավունքները բաժանել երեք խմբի.

1) դատավարական իրավունքներ, որոնց իրականացումն ազդում է դատավարության ընթացքի վրա (հայցի առարկան կամ հիմքը փոխելը, հայցն ընդունելը կամ հայցից հրաժարվելը, հաշտության համաձայնություն կնքելը),

2) դատաքննությանը մասնակցելու դատավարական իրավունքներ (դատաքննությանը մասնակցելու, դատական ներկայացուցչության, դատարանին բացատրություններ տալու, գործի նյութերին ծանոթանալու իրավունքներ, ապացույցներ ներկայացնելու և դրանց հետազոտմանը մասնակցելու և այլն),

3) դատավարական իրավունքներ, որոնք լայն իմաստով ապահովում են կողմերի դատական պաշտպանությունը (հայցի ապահովման իրավունք և այլն)¹⁷:

Կարելի է նշել, Մ. Ա. Վիկուտի առաջարկած դասակարգումը լիովին համապատասխանում է տնօրինչականության և մրցակցության սկզբունքների գործողության ոլորտների մասին մեր պատկերացումներին: Այն, մեր կարծիքով, թույլ է տալիս նախ՝ սահմանազատել տնօրինչական, մրցակցային և այլ բնույթի դատավարական իրավունքները, և երկրորդ՝ հստակորեն արտահայտում է տնօրինչական բնույթի իրավունքների նշանակությունը վարույթի ընթացքի և ուղղվածության տեսանկյունից:

Մեր կարծիքով, տնօրինչականության սկզբունքի գործողության ոլորտն այլ դատավարական սկզբունքների (այդ թվում՝ մրցակցության սկզբունքի) գործողության ոլորտներից սահմանազատելու հա-

¹⁷ См. у **Викут М. А.**, Проблема правового регулирования процессуального положения и деятельности сторон в советском гражданском судопроизводстве, Автореф. дис. ...юрид. наук, Свердловск, 1971, էջ 27:

մար օրենսդիրը հենց վերը նշված նկատառումներից ելնելով է ՔԴՕ 32-րդ հոդվածում առանձնացրել հայցի առարկան և հիմքը փոփոխելու, հայցապահանջի չափն ավելացնելու կամ նվազեցնելու, հայցից հրաժարվելու և հայցն ընդունելու, հաշտության համաձայնություն կնքելու դատավարական իրավունքները, որոնք դատավարագիտության մեջ հաճախ անվանվում են «պաշտպանության հայցային միջոցների տնօրինման հետ կապված իրավունքներ»¹⁸:

Ընդ որում, Մ.Ա. Վիկուտի կողմից առաջարկված դասակարգման առաջին խմբում ներառված իրավունքները պետք է համարել տնօրինչական ոչ միայն նկատի ունենալով դրանց ազդեցությունը վարույթի զարգացման, ուղղվածության և դադարման վրա, այլ նաև հաշվի առնելով, այն իրողությունը, որ դրանց իրականացումն ուղղակիորեն ազդում է գործին մասնակցող անձանց դատական պաշտպանության իրավունքի ճակատագրի վրա՝ դրանով իսկ հանդես գալով որպես տնօրինչական ակտ:

Իրավունքի տնօրինումը տվյալ իրավունքի ճակատագիրը որոշելուն ուղղված ակտ է, ակտիվ գործողություն, որի կատարմամբ իրավունքը կրողը լրիվ կամ մասնակիորեն և, որպես կանոն, անվերադարձ հրաժարվում է տվյալ սուբյեկտիվ իրավունքի բովանդակությունը կազմող հնարավորություններից: Կողմերի կամային տնօրինչական գործողությունների իրականացման արդյունքում իրավունքը դադարեցվում է ընդհանրապես կամ տվյալ դատավարական իրավահարաբերության շրջանակներում: Այս առումով, ՔԴՕ 32-րդ հոդվածով նախատեսված իրավունքները վեճի կողմերին հնարավորություն են վերապահում դրանց իրականացման միջոցով տնօրինելու իրավունքի դատական պաշտպանության հետ կապված դատավարական իրավունքները: Այսպես, հայցից լրիվ կամ մասնակիորեն հրաժարվելու դեպքում հայցվորը հրաժարվում է հարուցված հայցի (կամ դրա մի մասի) քննության և լուծման հետ կապված բոլոր դատավարական իրավունքներից, այդ թվում նաև գործով վեճն ըստ էության լուծող վճռի կայացում պահանջելու իրավունքից: Հայցի առարկան կամ հիմ-

¹⁸ Տե՛ս, օրինակ՝ **Պետրոսյան Ռ. Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., Եր., «Ոսկան Երևանցի» հրատ., 2012, էջ 254-260, Гражданское процессуальное право России. Под ред. **М. С. Шакарян.** М., 1996, էջ 139, Гражданский процесс. Под ред. **М. К. Треушников.** М., 1998, էջ 156, Гражданский процесс. Под ред. **В. В. Яркова.** М.: «Инфотропик», 2012, էջ 50-52:

քը փոփոխելով, հայցապահանջների չափն ավելացնելով կամ պակասեցնելով, հայցվորն ըստ էության հրաժարվում է սկզբնական բովանդակությամբ և ծավալով ներկայացված պահանջը քննելու և լուծելու իրավունքից: Հայցն ընդունելը պատասխանողին զրկում է իր դեմ հարուցված հայցի դեմ պաշտպանվելու դատավարական միջոցներն օգտագործելու հնարավորությունից: Հաշտության համաձայնություն կնքելու դեպքում կողմերը հրաժարվում են ինչպես իրենց իրավունքների պաշտպանության դատավարական միջոցները (իրավունքները) օգտագործելու, այնպես էլ իրենց միջև ծագած վեճը դատարանի կողմից ըստ էության լուծելու օրենքով երաշխավորված հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից կարծում ենք, որ տնօրինչականության սկզբունքի բովանդակությունը ներառում է այն դատավարական իրավունքները, որոնք թույլ են տալիս վարույթի ընթացքում որոշելու դատական պաշտպանության առարկան և ազդելու դատավարության ընթացքի ու դրա ուղղվածության վրա՝ կողմի համար ապահովելով իր խախտված կամ վիճարկվող իրավունքների և օրինական շահերի պաշտպանության առավել արդյունավետ եղանակն ընտրելու կամ դրանց պաշտպանությունից ընդհանրապես հրաժարվելու հնարավորություն:

Այդպիսի իրավունքներ են հանդիսանում՝ 1) հայցից հրաժարվելը, 2) հայցն ընդունելը, 3) հայցը փոփոխելը (ներառյալ հայցի առարկան կամ հիմքը փոփոխելը, հայցապահանջների չափը ավելացնելը կամ նվազեցնելը), 4) հաշտության համաձայնություն կնքելը:

Շատ դատավարագետներ տնօրինչական դատավարական իրավունքների թվին են դասում նաև դատարան հայց (դիմում) ներկայացնելը: Ուշագրավ է, որ նման մոտեցումը հիմնականում հատուկ է այն հեղինակներին, որոնք դատավարական տնօրինչականությունը դիտարկում են որպես նյութաիրավական տնօրինչականության դրսևորում և դրա ուղղակի հետևանք:

Իհարկե, դատական պաշտպանության դիմելու իրավունքը ևս անձն իրականացնում է իր հայեցողությամբ (Քաղ. օր. 11 հոդվ.), դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա (ՔԴՕ 3 հոդվ.), «ոչ ոք չի կարող հարկադրվել հայց հարուցելու իր կամքին հակառակ» («Nemo invitus agere cogitur»), և այս առումով դատական պաշտպանության դիմելու իրավունքի իրա-

կանացումը վճռորոշ նշանակություն ունի վարույթի ծագման համար: Սակայն կարծում ենք, որ այն տնօրինչական իրավունք համարվել չի կարող, առաջին հերթին, այն պատճառով, որ, դատարան դիմելով, անձն իր դատավարական որևէ իրավունք չի տնօրինում: Դատավարական իրավունքների տնօրինում տեղի չի ունենում նաև այն դեպքում, երբ անձը, որի կարծիքով իր իրավունքները կամ օրինական շահերը խախտված են, չի դիմում դրանց պաշտպանության պահանջով դատարան: Նման պահիվ վարքագիծը չի զրկում նրան հետագայում դատարան դիմելու իրավունքից, այդ թվում նաև հայցային վաղեմության ժամկետներն անցնելուց հետո¹⁹: Հետևաբար՝ տնօրինչական գործողություն կատարելու մասին տվյալ դեպքում խոսելը, մեր համոզմամբ, տեղին չէ:

Կարծում ենք, որ դատավարական տնօրինչականության շրջանակներում պետք է դիտարկել բացառապես «զուտ դատավարական» իրավունքները, այսինքն՝ նրանք, որոնք ծագում են դատարան հայցադիմում (դիմում) ներկայացնելու պահից, կարգավորվում են ՔԴՕ-ի նորմերով և, միաժամանակ, ուղղված են վարույթի ընթացքում խախտված կամ վիճարկվող իրավունքների և օրինական շահերի պաշտպանության առավել արդյունավետ եղանակ ընտրելու կամ դրանց պաշտպանությունից ընդհանրապես հրաժարվելու հնարավորության ապահովմանը:

Չնայած հայցադիմում (դիմում) ներկայացնելու գործողության դատավարական հսկայական նշանակությանը, մեր կարծիքով, այն տնօրինչական գործողությունների շարքում դիտելը հիմնավորված չէ: Եվ ամենևին էլ պատահական չէ, որ օրենսդիրը հայց (դիմում) ներկայացնելը չի ներառել ՔԴՕ 32-րդ հոդվածով նախատեսված տնօրինչական իրավունքների կազմում: Հայցով դատարան դիմելու իրավունքը, այդ իրավունքն անձի հայեցողությամբ իրականացնելու հնարավորությունը պետք է դիտարկել բացառապես իրավական կարգավորման դիսպոզիտիվության ընդհանուր-իրավական մեթոդի տեսանկյունից, բայց ոչ որպես վարույթի ընթացքում իրականացվող տնօրինչական ակտ:

Կարծում ենք, որ տնօրինչական գործողությունների շարքում

¹⁹ Տե՛ս **Քարսեղյան Ս. Գ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք (մաս առաջին), 3-րդ հրատ., ԵՊՀ հրատ., 2009, էջ 271:

պետք չէ դիտարկել նաև դատական ակտերը բողոքարկելու իրավունքը: Իհարկե, այն ևս իրականացվում է բողոք բերելու իրավունք ունեցող անձի հայեցողությամբ ու կամահայտնությամբ, վերաքննիչ, վճռաբեկ, նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթները կարող են հարուցվել բացառապես համապատասխան բողոքի հիման վրա, որի հիմքերով ու հիմնավորումներով էլ կանխորոշվում են համապատասխան վարույթի սահմանները, այդուհանդերձ, նկատի ունենալով այն, որ բողոքարկման իրավունքի իրականացման արդյունքում իրավունքների տնօրինմանն ուղղված ակտ (գործողություն) չի կատարվում, հակված ենք այն դիրքորոշմանը, որ դատական ակտը բողոքարկելու իրավունքը տնօրինչական չէ: Թերևս դրանով կարելի է բացատրել ՀՀ օրենսդրի մոտեցումը, որը դատական ակտերի բողոքարկման իրավունքը ներառել է ՔԴՕ-ի ոչ թե 32-րդ, այլ 28-րդ հոդվածում:

Հետևելով Մ. Ա. Վիկուտի դասակարգման հիմքում դրված գաղափարներին, կարծում ենք, որ դատարան դիմելու (ներառյալ՝ հակընդդեմ հայց ներկայացնելու) և դատական ակտը բողոքարկելու իրավունքներն առավել ճիշտ կլինի դիտարկել ոչ թե տնօրինչական, այլ այն իրավունքների շարքում, որոնք լայն իմաստով ապահովում են կողմերի դատական պաշտպանությունը²⁰:

Մի շարք հեղինակներ տնօրինչականության սկզբունքի հասկացության մեջ ներառում են ոչ միայն սուբյեկտիվ դատավարական իրավունքները, այլ նաև սուբյեկտիվ պարտականությունները տնօրինելու կողմերի հնարավորությունը²¹: Տվյալ մոտեցման հիմքում դրվում է այն իրողությունը, որ դատավարության շրջանակներում որոշակի դատավարական պարտականություններ կատարելու հարցում ևս օրենքը պարտավոր անձին վերապահել է որոշակի ազատություն, որի ուժով վերջինս ունի հնարավորություն իր հայեցողությամբ կատարել կամ չկատարել իր դատավարական պարտականությունը՝ դրանով իսկ ազդելով վարույթի ուղղվածության, բովանդա-

²⁰ См. у **Викут М. А.**, Проблема правового регулирования процессуального положения и деятельности сторон в советском гражданском судопроизводстве, Автореф. дис. ...юрид. наук, Свердловск, 1971, էջ 27:

²¹ См. у **Мойсеев С. В.**, Принцип диспозитивности арбитражного процесса. Дисс. к. ю. н. М., 2001, էջ 29, **Авдеенко Н. И.**, Механизм и пределы регулирующего воздействия гражданского процессуального права. Л.: ЛГУ, 1969, էջ 54:

կույթյան և հետագա զարգացման վրա:

Հիմնականում խոսքը վերաբերում է այն դատավարական պարտականություններին, որոնք վերաբերում են հայցի դեմ առարկելուն և գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների ապացուցմանը:

Ակնհայտ է, որ տվյալ մոտեցման հիմքում ևս դրվում են տնօրինչականության էությունը «ընտրության տեսության» միջոցով ներկայացնող հեղինակների գաղափարները, որոնք քննադատաբար ներկայացվել են սույն աշխատանքի նախորդ շարադրանքում:

ՔԴՕ 95-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանողը պարտավոր է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, դատարան ուղարկել հայցադիմումի պատասխան: Ըստ նույն հոդվածի 5-րդ մասի, պատասխան չներկայացնելը դատարանը կարող է գնահատել որպես պատասխանողի կողմից հայցվորի վկայակոչած փաստերի ընդունում: Այլ դատավարական հետևանքներ (առավել ևս հարկադրանք կիրառելու հնարավորություն) տվյալ պարտականության չկատարումը չի առաջացնում: Մակայն նշված հետևանքն էլ քիչ ազդեցություն չի թողնում վարույթի հնարավոր հետագա զարգացման վրա: Չէ՞ որ դատարանը նման իրավիճակում կարող է հայցվորին ազատել հայցի հիմքերն ապացուցելու անհրաժեշտությունից՝ ՔԴՕ 64-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով դրանք ճանաչելով հաստատված: Ավելին, հայցադիմումի պատասխան չներկայացնելը որոշակի այլ պայմանների առկայության հետ մեկտեղ կարող է հիմք հանդիսանալ ներկայացված հայցն «ակնհայտորեն հիմնավորված» համարելու և գործն արագացված դատաքննության կարգով լուծելու համար՝ դրանով իսկ ազդելով վարույթի հետագա զարգացման վրա²²:

Ակնհայտ է, որ հայցադիմումի պատասխան չներկայացնելով՝ պատասխանողը, հայցը չընդունելու դեպքում, դրա դեմ առարկելու իր սուբյեկտիվ պարտականությունը կատարելու հարցում դրսևտրում է հայեցողություն:

Հարց է առաջանում՝ նման վարքագիծը կարելի է արդյոք դիտարկել որպես պարտականության տնօրինում: Կարծում ենք, որ ոչ: Սուր-

²² Տե՛ս Մեղրյան Մ. Գ., Արագացված դատաքննության հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր., 2011, էջ 7-8:

յեկտիվ ցանկացած պարտականություն ենթադրում է պարտադիր վարքագիծ դրսևորելու անհրաժեշտություն, որն ապահովված է որոշակի անբարենպաստ հետևանքների կիրառման սպառնալիքով:

Գործին մասնակցող անձանց դատավարական պարտականությունների զգալի մասի կատարումն ապահովված է որոշակի սանկցիաների կիրառման սպառնալիքով: Այսպես, սուտ ցուցմունք տալը, դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելը, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելը, դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելը, դատավորի օրինական կարգադրությունները չկատարելը, դատական ակտը դիտավորյալ չկատարելը դատական և այլ սանկցիաների կիրառման հիմք են հանդիսանում: Նման դատավարական պարտականությունները կատարելիս հայեցողություն դրսևորելու կողմի հնարավորության մասին խոսք լինել չի կարող:

Միննույն ժամանակ, ինչպես իրավացիորեն նկատում է Ս. Գ. Մեղրյանը, քաղաքացիական դատավարությանը հատուկ տնօրինչականությունը, կողմերի նախաձեռնողականությունը և մրցակցությունը ոչ միայն չեն բացառում, այլ նաև ենթադրում են դատարանի կարգապահական իշխանությունից չաժանցվող պարտականությունների գոյությունը, որոնց չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը կարող են ոչ թե սանկցիաների (պետական հարկադրանքի) կիրառման հիմք հանդիսանալ, այլ առաջացնել զուտ դատավարական բնույթի անբարենպաստ հետևանքներ²³: Այսպես, հայցադիմումի պատասխան չներկայացնելը, ապացուցման պարտականությունը կրող անձի կողմից այն չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, ցուցմունք տալուց անհիմն հրաժարվելը, ցուցմունք տալուց որոշակի հարցերի չպատասխանելը կամ դրանց պատասխանելուց խուսափելը սանկցիաների կիրառման հնարավորություն չեն նախատեսում: Համապատասխան պարտականությունները չկատարելու դեպքում օրենքը նախատեսում է այլ անբարենպաստ հետևանքներ: Մասնավորապես սահմանվում է, որ պատասխան չներկայացնելը դատարանը կարող է գնահատել որպես պատասխանողի կողմից հայցվորի վկայակոչած փաստերի ընդունում (ՔԴՕ 95 հոդվ., մաս 5), եթե բոլոր ապացույցնե-

²³ Տե՛ս Մեղրյան Ս. Գ., Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, Երևանի պետ. համալսարան, - Եր., 2011, էջ 71:

րի հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը (ՔԴՕ 48 հոդվ., մաս 6), պատասխանից կամ ցուցմունքից դատարանի կողմից որպես անհիմն գնահատված հրաժարումը (խուսափումը) մեկնաբանվում է ի վնաս հրաժարվողի (խուսափողի), և դատարանը կարող է գործի այն փաստական հանգամանքները, որոնց վերաբերյալ կողմը հրաժարվում (խուսափում) է ցուցմունք կամ պատասխան տալուց, համարել ապացուցված (ՔԴՕ 48 հոդվ., մաս 3): Կողմը հայեցողություն կարող է դրսևորել նման պարտականությունների կատարման հարցում, և նման հայեցողությունը, ըստ էության, կարող է էապես ազդել վարույթի հետագա զարգացման և ուղղվածության վրա:

Սակայն միևնույն ժամանակ ակնհայտ է, որ պարտականությունների վերջին խումբն ունի այն առանձնահատկությունը, որ դատավարական պարտականություններ լինելուց զատ դրանք նախևառաջ դատավարական իրավունքներ են²⁴: ՔԴՕ 28-րդ հոդվածի շրջանակներում առարկելու, ապացույցներ ներկայացնելու, դրանք ձեռք բերելու միջնորդություններով դատարանին դիմելու, ցուցմունք և բացատրություն տալու հնարավորությունները սահմանված են որպես գործին մասնակցող անձանց հիմնական դատավարական իրավունքներ: Այն դեպքերում, երբ ապացուցելը, ապացույցներ և դրանք ձեռք բերելու միջնորդություններ ներկայացնելն ապացուցման պարտականությունը բաշխելու ուժով կամ դատավարական օրենսդրությամբ սահմանված դեպքերում դատարանի որոշմամբ վեր են ածվում գործին մասնակցող անձի պարտականության, վերջինս կարող է կատարվել բացառապես համապատասխան դատավարական իրավունքն իրականացնելու ճանապարհով: Այլ կերպ ասած, եթե գործին մասնակցող անձը չի ներկայացնում հայցադիմումի պատասխան

²⁴ Նշված դատավարական պարտականությունները դիտարկվում են միևնույն ժամանակ որպես գործին մասնակցող անձանց իրավունքներ և դատավարագիտության մեջ, և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում: Տե՛ս, օրինակ՝ **Մեղրյան Մ. Գ.**, Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, Երևանի պետ. համալսարան, - Եր., 2011, էջ 73, ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-311/Ա քաղ. գործով 29.10.2010 թ. որոշումը, թիվ 3-59/ՏԴ քաղ. գործով 01.02.2008 թ. որոշումը, թիվ ԱԸԱԴ/0080/02/09 քաղ. գործով 25.12.2009 թ. որոշումը, թիվ ԿԴ1/0810/02/08 քաղ. գործով 12.03.2010 թ. որոշումը, թիվ ԵԱՔԴ/1641/02/09 քաղ. գործով 29.10.2010 թ. որոշումը:

կամ չի ներկայացնում իր պահանջների և առարկությունների հիմքում դրված փաստերը հաստատող ապացույցներ՝ դրանով իսկ չկատարելով իր դատավարական պարտականությունները, հարկ է խոսել այն մասին, որ նա ոչ թե տնօրինում է իր դատավարական պարտականությունները, այլ չի իրականացնում իր մրցակցային բնույթ ունեցող դատավարական իրավունքները, որոնք հանդիսանում են ոչ թե տնօրինչականության, այլ մրցակցության սկզբունքի ապահովման երաշխիքներ:

Շարադրվածը հաշվի առնելով՝ համամիտ չենք այն հեղինակների հետ, որոնք տնօրինչականության սկզբունքի բովանդակության մեջ են դիտարկում և քննարկվող սկզբունքի հասկացության մեջ են ներառում նաև սուբյեկտիվ դատավարական պարտականությունները տնօրինելու հնարավորությունը:

Անփոփելիվ տնօրինչականության էության և տնօրինչականության դատավարական սկզբունքի բովանդակության վերլուծությունը՝ կարելի է անել հետևյալ հետևությունները:

1. Տնօրինչականության դատավարական սկզբունքի էության և բովանդակության վերաբերյալ քաղաքացիական դատավարագիտության մեջ ձևավորված տեսությունների և դիրքորոշումների ուսումնասիրության և անփոփման, ՀՀ գործող քաղաքացիական դատավարության օրենսդրության առանձին նորմերի համադրված վերլուծության հիման վրա առաջարկվում է տնօրինչականության սկզբունքը բնորոշել որպես քաղաքացիական դատավարության հիմնարար ու ղեկավար դրույթ, որի ուժով օրենքով նախատեսված դեպքերում և կարգով դատարանի գործունեությունը պայմանավորված է սույլ գործի էլքում իրավաբանական շահ ունեցող անձանց նախաձեռնությամբ և կամահայտնությամբ կատարվող գործողություններով, և որը գործին մասնակցող անձանց հնարավորություն է ընձեռում վարույթի ընթացքում որոշելու դատական պաշտպանության առարկան և ազդելու դատավարության ընթացքի ու դրա ուղղվածության վրա: Հիմնված լինելով սուբյեկտիվ իրավունքների, ազատությունների և օրինական շահերի դատական պաշտպանության իրավունքի անարգել իրականացման և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներից օգտվելու սահմանադրական իրավունքների վրա՝ տնօրինչականության սկզբունքը կողմերի համար ապահովում է խախտված կամ վիճարկվող իրավունքների և օրինական

շահերի պաշտպանության առավել արդյունավետ եղանակներ ընտրելու կամ դրանց դատական պաշտպանությունից ընդհանրապես հրաժարվելու հնարավորություն:

2. Չբացառելով դատավարության ընթացքում տնօրինչական գործողությունների կատարման արդյունքում նյութական իրավունքները տնօրինելու հնարավորությունը, դատավարության տնօրինչականության տեսանկյունից գերակայող նշանակություն ունի այն դատավարական իրավունքների իրականացումը, որոնց իրացումը հանգեցնում է դատական պաշտպանության իրավունքի և պաշտպանության հայցային միջոցների տնօրինման: Քաղաքացիական դատավարության իրավունքի տնօրինչականության սկզբունքը վերաբերում է բացառապես իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանության իրավունքի և դրանց պաշտպանության միջոցների տնօրինման հնարավորությանը: Բնչ վերաբերում է նյութական իրավունքների տնօրինմանը, ապա այն ունի ինքնուրույն բնույթ, հանդիսանալով նյութական իրավունքի տնօրինչականության սկզբունքի դրսևորում, որն է կերպ չի կարող անդրադառնալ դատավարության վրա, եթե չի ստանում համապատասխան դատավարական ձև:

3. Տնօրինչականության սկզբունքի բովանդակությունը որոշակիացնելու, տնօրինչական գործողությունների քանակական կազմը որոշելու, ինչպես նաև տնօրինչականության և մրցակցության սկզբունքների գործողության ոլորտները սահմանազատելու նկատառումներից ելնելով առաջարկվում է կողմերի դատավարական իրավունքները դասակարգել երեք խմբի՝

ա) դատավարական իրավունքներ, որոնք լայն իմաստով ապահովում են կողմերի դատական պաշտպանությունը (հայցով (դիմումով) դատարան դիմելու, հայցի և վճռի ապահովման, վերաքննիչ և վճռաբեկ բողոքարկման, դատական ակտի հարկադիր կատարման իրավունք և այլն),

բ) տնօրինչական իրավունքներ, որոնք թույլ են տալիս վարույթի ընթացքում որոշելու դատական պաշտպանության առարկան և ազդելու դատավարության ընթացքի ու դրա ուղղվածության վրա՝ կողմի համար ապահովելով իր խախտված կամ վիճարկվող իրավունքների և օրինական շահերի պաշտպանության առավել արդյունավետ եղանակն ընտրելու կամ դրանց պաշտպանությունից ընդհանրապես հրաժարվելու (դատական պաշտպանության իրավունքը տնօրինելու)

հնարավորություն (հայցի առարկան կամ հիմքը փոխելը, հայցն ընդունելը կամ հայցից հրաժարվելը, հաշտության համաձայնություն կնքելը),

զ) մրցակցային իրավունքներ, որոնք հանդիսանում են կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքների իրականացման երաշխիքներ (դատաքննությանը մասնակցելու, լսված լինելու, դատական ներկայացուցչության, դատարանին բացատրություններ տալու, գործի նյութերին ծանոթանալու, ապացույցներ ներկայացնելու և դրանց հետազոտմանը մասնակցելու իրավունքներ և այլն):

Առանձին տնօրինչական գործողությունների հատկանիշները վերհանելու և ընդհանրացնելու հիման վրա առաջարկվում է որպես տնօրինչական դիտարկել կողմերի այն դատավարական գործողությունները, որոնց կատարմամբ գործին մասնակցող անձը, սովյալ վարույթի շրջանակներում կամ ընդհանրապես, սեփական հայեցողությամբ և անվերապահորեն տնօրինում է իր ենթադրյալ սուբյեկտիվ իրավունքի կամ օրինական շահի դատական պաշտպանության իրավունքը՝ կանխորոշելով սովյալ գործով վարույթի ընթացքը և ուղղվածությունը: Հիմնավորվում է, որ ՀՀ ՔԴՕ-ով նախատեսված այդպիսի գործողությունների թվին են դասվում հայցից հրաժարվելը, հայցն ընդունելը, հայցի առարկան կամ հիմքը փոխելը, հայցապահանջների չափն ավելացնելը կամ նվազեցնելը, հաշտության համաձայնություն կնքելը:

Вардун Есаян

Соискатель кафедры гражданского процесса ЕГУ

СОДЕРЖАНИЕ ПРИНЦИПА ДИСПОЗИТИВНОСТИ (РАСПОРЯДИТЕЛЬНЫЕ ПРОЦЕССУАЛЬНЫЕ ПРАВА, РАСПОРЯДИТЕЛЬНЫЕ ДЕЙСТВИЯ)

На основании изучения и обобщения сформировавшихся в науке гражданского процессуального права теорий и позиций относительно сущности и содержания процессуального принципа диспозитивности, автор приходит к выводу, что принцип диспозитивности обеспечивает сторонам возможность выбрать наиболее эффективные способы защиты их нарушенных или оспариваемых прав и законных интересов,

либо вообще отказаться от их судебной защиты. Будучи основанным на беспрепятственном осуществлении права на судебную защиту субъективных прав, свобод и законных интересов и на конституционном праве на использование эффективных средств правовой защиты, принцип диспозитивности обеспечивает для сторон процесса возможность выбора наиболее эффективного способа защиты нарушенных или оспариваемых прав и законных интересов либо возможность вообще отказаться от их судебной защиты.

Обосновывается точка зрения о том, что содержание процессуальной диспозитивности составляют те процессуальные права, реализация которых в уже начатом процессе приводит к распоряжению правом на судебную защиту и средствами их защиты, предопределяя ход и направленность производства по данному делу. Аргументируется позиция, что к числу таких процессуальных действий распорядительного характера относятся отказ от иска, признание иска, изменение предмета или основания иска, увеличение или уменьшение размеров исковых требований, заключение мирового соглашения.

Vardush Yesayan
PhD Student at the YSU Chair of Civil Procedure

THE CONTENT OF THE DISPOSITIVENESS PRINCIPLE (DISPOSITIVE RIGHTS, DISPOSITIVE PROCEDURAL ACTIONS)

Based on examination and summary of the theories elaborated in the science of civil procedure and positions concerning the essence and content of the procedural principle of dispositiveness as well as comparative analysis of existing norms of the Civil-Procedure Code of the RA, the author proposes to define the dispositiveness principle as a fundamental and guiding provision by virtue of which the court proceedings in cases and order stipulated by law are conditioned by actions undertaken by initiative and will persons legally interested in the outcome of the case, and which enables the persons participating in the case to define the subject of the court protection during the process and to influence the progress and the

direction of the procedure. Being based on the unimpeded enjoyment of the right to court protection of subjective rights, freedoms, legal interests and the constitutional principle of using effective means of legal protection, the dispositiveness principle ensures for the parties of the proceedings the possibility to choose the most effective means of protection of their infringed or argued rights or to refuse judicial protection at all.

The point of view is substantiated that the content of the procedural dispositiveness consists of those procedural rights realization of which brings to enjoyment of the right to judicial protection and means of their protection, predicting the progress and direction of the proceeding of the given case.

Բանալի բառեր՝ *տնօրինչականության սկզբունք, տնօրինչականության բովանդակություն, տնօրինչական իրավունքներ, տնօրինչական դատավարական գործողություններ:*

Ключевые слова: *принцип диспозитивности, содержание диспозитивности, распорядительные права, распорядительные процессуальные действия.*

Key words: *dispositiveness principle, content of the dispositiveness, dispositive rights, dispositive procedural actions.*